

ՀԱՅԿՈՐՅԱՆ

ԱՆԱՆՈՒՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ
ԿԱՄ ՎԱՐԴԱՆ ԱՐԵՎԵԼՑՈՒ «ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՏԻԵԶԵՐԱԿԱՆ»-Ի
ՀԱՄԱՌՈՏ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

13-րդ դարի հատկապես երկրորդ կեսի հայոց պատմության համար քաղական հետաքրքիր տեղեկություններ պարունակող մի ժամանակագրություն է հրատարակվել Մատենադարանի կողմից՝ 1940 թվին, «Անանուն ժամանակագրություն» խորագրով: Վերջինիս հիմք են հանդիսացել Մատենադարանի №№ 2174 և 3425 ժողովածուների մեջ գտնվող միևնույն ժամանակագրության երկու տարբերակները, որոնք ամբողջական չեն, և կազմում են միմյանց շարունակությունը: Այդ պատճառով հրատարակիչները ժամանակագրությունը հրատարակելիս, այն ամբողջական լինելու նկատառումներով, վերահիշյալ երկու տարբերակները լրացրել են միմյանցով:

Անանուն ժամանակագրության մի այլ տարբերակը, որը հրատարակիչներն իրենց ձեռքի տակ չեն ունեցել, գտնվում է Մատենադարանի № 6617 ժողովածուի 229 ա-247 ր էջերում¹: Այն այսուհետև կանվանենք Գ տարբերակ:

Անանունի և Գ տարբերակի համեմատությունը երևան հանեց մի շարք հետաքրքիր կողմեր:

Նախ՝ աշխարհի ստեղծագործության և նահապետներին վերաբերող մասը երկու բնագրերում ոչ միայն տարբեր են, այլև Անանունի մեջ բավական ընդարձակ: Երկու բնագրերն իրար ծածկում են Անանունի 10-րդ էջի 7-րդ տողի (ներքևի)՝ «ի ծննդէնէն մինչև ի Ս. Գրիգոր և ի Ժէ ամն Տրդատա են ամք ՅԺ» հատվածից սկսած մինչև Գ տարբերակի վերջին եզրը՝ 1267 Կոստանդին կաթողիկոսի մահվան վկայությունը:²

Երկրորդ՝ Գ տարբերակի վերջին եզրից հետո Անանունը շարունակվում է մինչև 1300 թվականը՝ մինչև Ղաղանի եզրպտոս արշավելը և

¹ Ստորև բերում ենք № 6617 ձեռագրի համառոտ նկարագրությունը: Այն պատմական և այլ նյութերի ժողովածու է, բաղկացած 267 թերթից: Մեծությունը՝ 20×14: Միասունը: Նոտրգիր: Վիճակը՝ բավարար ճողերը՝ 18: Գրիչը՝ Ավետիս ժամանակը՝ 1618: Վայրը՝ Սպահան (էջ 253 ր.):

² Գ տարբերակում ամենավերջին վկայությունը վերաբերում է դեպի Կիլիկիա Ֆնդիտարի կատարած արշավանքին, որը դրված է 1268 թ. (ՁԺէ) ներքո: Բայց որովհետև այդ արշավանքն իրականում տեղի է ունեցել 1266 (=ՁԺն թ.), ենթադրում ենք, որ այստեղ կատարվել է գրչագրական սխալ, այսինքն՝ «ե» և «է» տառերի շփոթության հետևանքով դրել են ոչ թե «ՁԺն», այլ «ՁԺէ»: Հետևապես, Գ տարբերակի նախավերջին վկայությունը, որը վերաբերում է Կոստանդին կաթողիկոսի մահվանը և որը գրված է 1267 թ. ներքո, ժամանակի տեսակետից դառնում է Գ տարբերակի վերջին եզրը, ինչպես այդ վարդան Արևելցու մոտ է:

Սերաստիայում ու ալլուր տեղի ունեցող սովը: Այլ խոսքով Գ տարբերակում բացակայում է 33 տարվա պատմություն:

Երրորդ՝ Գ տարբերակի մի ընդարձակ հատվածը, որը վերաբերում է դեպի Հայաստան կատարած մոնղոլների առաջին արշավանքին, Ջալալեդդինի ասպատակություններին և այլ հարցերի, Անանունի բնադրի թերի լինելու պատճառով բացակայում է նրա հրատարակության բնադրում (էջ 20):

Չորրորդ՝ Անանունի մեջ տեղ են գտել մի շարք անճիշտ և սխալ ընթերցված բառեր, որոնք աղավաղում են բնադրի իմաստը. այդպիսի օրինակներից բերենք միայն մի քանիսը.

Անանուն

1. էջ 12 «...դի ընդ նուազել թագաւոր թագաւորութեանն Պարսից Սատանայեան ազգին...»:

2. էջ 16 «Յայնժամ Սենաքերիմ տայր զամենայն աշխարհն Վասպուրական ի Վասիլն ՀԲ թիմափերթ տնգեղս...»:

3. էջ 18 «... և եկեալ յաղթեն զխլիճաւան Սուլտանն»:

4. էջ 20 «... զոր կոտորեաց և զոր ի կաւ հանէին...»:

Գ. Տարբերակ

1. էջ 231 ր «...դի ընդ նու[ա]ղ(ե)լ թագաւորէն Պարսից Սատանայեան ազգին...»:

2. էջ 236 ր «Յայնժամ Սինէքարիմ տայր զամենայն աշխարհն Վասպուրականայ ի Վասիլն ՀԲ թեմբերդ (չորս հազար ԴՃ. գ(ե)օղս...»:

3. էջ 238 Բ «... և եկեալ յաղթեն զղլին Ասլան սուլթանն...»:

4. էջ 241 Բ «... զոր կոտոր[ե]աց և զոր ի հաւատաց հանէին...»:

Հինգերորդ՝ երեքսն Գ տարբերակում միևնույն վկայությունն ավելի ընդարձակ է, քան Անանունինը: Այսպիսի օրինակներից նույնպես բերենք միայն մի քանիսը.

Անանուն

1. էջ 13 «և նայ (Մովսեսը—Վ. Հ.) ձեռնադրեց նոցայ զփակակալ և կեղեցոյն Կրիոն անուն, որ էր ազգաւ Վրացի, զնայ ձեռնադրեց կաթողիկոս Վրաց...»:

Գ Տարբերակ

1. էջ 233 ա «Եւ նայ (Մովսեսը—Վ. Հ.) ձեռնադր(ե)աց նոցա զփակակալն եկեղեցոյն Կրիոն անուն, որ էր ազգաւ ի Վրաց, ի գեղջէ Սկուտրի և գիտէր գիր հայոցս և վրացից զնա ձեռնադր[ե]աց կաթողիկոս վրաց...»:

¹ «Տնգեղս» բառին, հրատարակության բնագրում տրված է ծանոթագրություն՝ «թերևս՝ տեառնադեղս (?)», քանի որ սխալագիր է» (էջ 16, ծանոթ.):

Հրատարակիչներին և՛ ընթերցումը և՛ ծանոթագրությունը սխալ է: Սույն վկայության մեջ «Տ» տառը սլետք է հասկանալ նրա թվաբանական նշանակությամբ՝ 4000, ինչպես և Մ. Ուոհայեցու մոտ է. «և տայր Սենեքերիմ զաշխարհն Վասպուրականի թեմբերդս ՀԲ և գեղս ՏՆ (—4400) և գվանորայսն ոչ ետ...» («Ժամանակագրություն», Վաղարշապատ, 1898, էջ 49): Հմմ. «Սամուէլի քահանայի Անեցւոյ հաւաքմունք ի գրոց պատմադրաց», Վաղարշապատ, 1893, էջ 104):

2. էջ 19 «... զորոց (մոնղոլներին—Վ. Հ.) զհետ մտեալ Լաշա թագաւոր Վրաց, Լաշա և Իւանէ պատերազմել ընդ թաթարին...»:

2. էջ 240 Բ «... զորոց (մոնղոլներին—Վ. Հ.) ի յետմտեալ Լաշա թագաւորն Վրաց և մեծ զօրապետն Իւանէ հասանի առ զետոմիս Կոսմանայ (sic) և յաղթի ի թագաւորէն և լինի փախստական: Եւ ապա դարձան ժողով արարին թագաւորն Վրաց Լաշայ և Իւանէ պատերազմել ընդ թաթարին...»:

Նման օրինակները կարելի է շարունակել:

Վեցերորդ՝ Գ տարբերակում կան վկայութիւններ, որոնք ուղղակի բացակայում են Անանուհի մեջ, ասեմք՝ Հուլիւսի 1261 թ. արշավանքը դեպի Հալեպ, Դամասկոս և այլ վայրեր, Գոստանդին կաթողիկոսի հանդիպումը Հուլիւսին և քրիստոնյա գետիների ազատագրումը, կամ 1263 թ. Աղվանից Ներսես կաթողիկոսի, Յովհաննես Տվեցու մահը, ինչպես նաև մի քանի այլ վկայութիւններ: Բնչպես կարող էր առաջ դալ Գ տարբերակի վերոհիշյալ շեղումները: Առաջին, երկրորդ օրինակները մեզ բերում են այն ենթագրութեան, որ հետագայում, համապատասխան բնագրերից Անանուհի սկզբնական բնագրի առանձին վկայութիւններին ավելացրել են առավել մանրամասն տեղեկութիւններ, և կամ այնպիսիք, որոնք բացակայել են Անանուհի սկզբնական բնագրում: Այլ խոսքով, վերջինս խմբագրման է ենթարկվել: Բանն այդպես է ընթացել նաև աշխարհի ստեղծագործութեան վերաբերող հատվածում:

Այսքանը Անանուհի և նրա Գ տարբերակի փոխհարաբերութեան մասին:

Թե ինչ աղբյուրներ է օգտագործել Անանուհը, ահա թե ինչ են գրում նրա հրատարակիչները բնագրին նախորդող փոքրիկ առաջաբանում:

«13-րդ դարու 60-ական թվականներից հետո ժամանակագիրն ինքնուրույն է. նա չէր կարող օգտվել ոչ Կիրակոսից, ոչ Վարդանից և ոչ էլ Մխիթարից կամ Օրբելյանից, քանի որ հիշված պատմիչներից՝ միայն Օրբելյանն է, որ իր «Պատմութիւն տանն Սիսական»-ը հասցնում է մինչև 13-րդ դարի վերջը, իսկ մյուսները 60-ական թվականներից այս կողմը չեն անցնում: Օրբելյանից էլ օգտվել չէր կարող, որովհետև նրա գիրքը դեռ ասպարեզ չէր իջել: Բացի վերոհիշյալներից՝ ավելացնենք, որ ժամանակագիրը շատ դեպքերի նկարագրութեան մեջ ինքնուրույն է և օգտվել է այնպիսի աղբյուրներից, որոնք առայժմ մեզ անհայտ են: Այս առթիվ հիշատակելի է Ջաքարյանների տոհմական ծագումը բացատրող հատվածները, Լուսավորիչի տան վերաբերյալ գրույցը և այլն» (էջ 6—7):

Այսպիսով, եթե նկատի ունենանք հրատարակիչների այն պնդումը, թե ժամանակագրութիւնը «13-րդ դարի 60-ական թվականներից հետո ինքնուրույն է» և նրա հեղինակը չի օգտվել «ոչ Կիրակոսից, ոչ Վարդանից և ոչ էլ Մխիթարից կամ Օրբելյանից», ապա ստանում ենք այն տպավորութիւնը, որ նրանք նպատակ չեն ունեցել պարզել ժամանակագրու-

¹ Հիշենք, որ Անանուհի № 2174 ժողովածուի բնագիրը 14-րդ դարի ընդօրինակութիւն է, իսկ Գ տարբերակը՝ 17-րդ դարի:

թյան մինչև 13-րդ դարի 60-ական թվականների աղբյուրները, եվ իսկապես, հրատարակիչներն Անանունի աղբյուրները պարզելու ուղղությամբ շատ քիչ փորձ են կատարել և այդ կապակցությամբ չեն օգտագործել իրենց ձեռքի տակ գտնված մատենագրական տեղեկությունների մինչև մումը: Այսպես՝ Հեթում Ա-ի մասին բնագրում կարդում ենք. «և ի նոյն թվիս (1254 թիվ — Վ. Հ.) քրիստոսասէր արքայն Հայոց Հեթում գնաց առ Բաթու մեծ թաղաւորն հիւսիսոյ, որ էր համազգի Չանկղ Ղանին, և անտի առ Մանկու Ղանն, և մեծապատիւ փառաւք հետ տարու մի դարձաւ ի տուն իւր» (էջ 22):

Սույն վկայության առթիվ հրատարակիչները տալիս են իրենց ընդարձակ ծանոթագրությունից մեկը, որտեղ կարդում ենք. «Մեր մյուս մատենագիրների մոտ չկա այդ տեղեկությունը: Մինչև այժմ հայտնի էր Հեթումի՝ միայն Մանկու Ղանի մոտ կատարած այցելության մասին: Եթե այստեղ չկա պատմական տեղեկությունների շփոթություն, ապա Հեթումի այս այցելության նշանակությունը խիստ մեծանում է և նոր լույս սըփռում հայ-մոնղոլական հարաբերությունների վրա» (էջ 35, ծանոթ. 37):

Թե հրատարակիչները ինչքան անտեղյակ են եղել մեր մյուս մատենագիրների տված տեղեկություններին, երևում է Վարդան Արևելցու ներքոհիշյալ վկայությունից. «Յեօթն հարիւր և երեք թուին քրիստոսասէր արքայն Հայոց՝ Հեթում, չոգաւ ի Բաթու մեծ թաղաւորն հիւսիսոյ՝ համազգի Չանկղ Ղանին, և անտի առ Մանկու Ղանն և ըստ արժանւոյն պատուեցաւ և մեծարեցաւ, և դարձաւ յետ տարւոյ միոյ խաղաղութեամբ յաթոռն իւր»¹:

Դժմար չէ նկատել, որ Վարդանի վերոբերյալ վկայությունը նույնությամբ անցել է Անանունին: Հետևապես, հրատարակիչների այն պնդումը, թե «մեր մատենագիրների մոտ չկա այս տեղեկությունը», միանգամայն անհիմն է: Եվ որովհետև Վարդան Արևելցու պատմության հետ Անանունի (ինչպես և Գ տարբերակի) այնքան սերտ աղբյուրում մատնացույց արված օրինակով չի սպառվում, այդ պատճառով երկու բնագրերի վերոհիշյալ հատվածների նույնությունն առիթ տվեց մեզ խոսել Անանունի աղբյուրների մասին ճորտաց մեղ (հրատարակիչներին — Վ. Հ.) անհայտ են»:

Մենք համեմատեցինք և՛ Անանունը, և՛ Գ տարբերակը Վարդան Արևելցու պատմության հետ և նկատեցինք, որ առաջինները վերջինիս համառոտ (միաժամանակ յուրահատուկ) խմբադրությունն է: Նույնիսկ Գ տարբերակի այն հատվածները, որոնք չեն գտնում Անանունի մեջ, դարձյալ հանդիպում ենք Վարդանի պատմության մեջ: Այսպիսով, Անանունի խմբադրողը (Գ տարբերակ) դեռևս իր ժամանակ նկատել է, որ Անանունը Վարդան Արևելցու պատմության համառոտումն է և իր հերթին վերջինիցս նոր տեղեկություններ ավելացրել Դ տարբերակին:

¹ «Մեծին Վարդանայ Բարձրբերդիցւոյ պատմութիւն տիեզերական», Մոսկվա, 1861, էջ 195: Կ. Գանձակեցին ևս հիշում է Հեթում Ա-ի այցելությունը Բաթու ղանին: Այդ այցելությունը նշված է նույնիսկ համապատասխան գլխի խորագրում «Վասն երթալոյն բարեպաշտ թագաւորին Հայոց Հեթմոյ առ Բաթոյն և Մանկու Ղանն», և այնուհետև նկարագրում «անապարհորդութունն ու բանակցութունները (Տես՝ «Պատմութիւն Հայոց», ԹԻՖ-լիս, 1910, էջ 350 — 357):

Վերոհիշյալ մեր ասածի հաստատման համար ստորև կրենք մի շարք օրինակներ:

Ինչպես տեսանք, հրատարակիչները Անանունի հաղորդած ինքնօրոյն տեղեկութիւններից հատկապես շեշտում են Զաքարյանների տոհմի ծագման և Գր. Լուսավորչի տան վերաբերող զրույցները, ուստի և նախ ցույց տանք վերոհիշյալ տեղեկութիւնների «անհայտ» աղբյուրը, ապա անցնենք Վարդան Արևելցու ժամանակակից դեպքերի հիշատակութիւնների համեմատութիւններին:

Լուսավորչի տան մասին.

Վարդան—«Պատմութիւն տիեզերական»

Անանուն

1. էջ 53. «Եւ զկնի ամի միոյ դարձաւ ի Պարսս, և հասեալ (Բունդարա պարսկը—Վ. Հ.) աներոյն արգելու ի Վաղարշապատ քաղաքի, ուր մտանէր Սոփի ստնտու մանկանն Գրիգորի, ցնա տուեալ այր իւր՝ ի գրկացն Ոգուհեայ առեալ ի ժամ կոտորածոյ ազգին Անակայ և տարեալ ի Կեսարիա ընծայեն Քրիստոսի: Եւ վարժեալ անդ յոյն և ասորի գրով և եղեալ երկոտասան ամաց՝ Դաւիթ ոմն ամուսնացուցանէ զնա ի դուստր իւր՝ Մարիամ: Եւ եղեալ երկուց որդւոց՝ մեկնին ի միմեանց—Մարիամ ի կանանց վանս զնաց երէց որդւովն, և կրսերն զնաց զկնի ճգնաւորի ումեմն Նիկոմաքեայ»:

Եթե մի կողմ թողնենք Վարդան Արևելցու օգտագործած աղբյուրի որոշման խնդիրը, որը չի վերաբերում մեզ հուզող հարցին, ապա վերորերյալ համադրութիւնից միանգամայն հնարավոր է անսխալ եզրակացնել, որ «անհայտ» այն աղբյուրը, որն իր ձեռքի տակ ունեցել է Անանունի հեղինակը, վերջինիս խմբագրողը, դա Վարդան Արևելցու «Պատմութիւն տիեզերական» աշխատութիւնն է:

Զաքարյաններին վերաբերող տեղեկութիւններին մասին.

2. էջ 181. «Յաւուրս ժամանակաց այսոցիկ (Լեոն Ա.—Վ. Հ.) էին փառաւոր իշխանք Զաքարէ և Իւանէ՝ որդիք Սարգսի՝ որդւոյ Վահրամայ, որդւոյ Զաքարի, որդւոյ Սարգսի՝ ի քրդ ազգէ հատուածեալ առ թագաւորսն Ձորոյ գետին, որ Բագրատունեաց ազգն է, հաւատացին ի Քրիստոս և պատուեցան: ... և ին-

1. էջ 11 «... և սուրբն Գրիգոր տղա ի ստինս դայեկացն, զոր առեալ փախուցին ի Կեսարիայ և անդ սնուցին արինաւքն Քրիստոսի. և անդ ուսաւ Յուն և Ասորի գիր: Եւ եղեալ ըԺ ամաց ոմն Դաւիթ անուն ամուսնացոյց զնայ ի դուստր իւր, Մարիամ անուն, և լինի Բ. որդի և մեկնին ի միմեանց. և զնաց Մարիամ ի կանանց վանսն անդրանիկ որդոմն և կրսերն զնաց զհետ ճգնաւորի ումեմն Նիկոմոսքեայանուն...»

2. էջ 19 («Յաւուրս թագաւորութեանն Լեոնի եկն յարեւել Բ. փառաւոր իշխանքն՝ Զաքարէ և Իւանէ՝ որդիք Սարգսի բարեպաշտին և Իւանի որդւոյ Վահրամայ, որդւոյ Զաքարէի, որ ի Գուրդ ազգէ ի դապիրական խելէ պատուեալք ի թագուհոյն ի Վրացի Թամարայ, որ էր դուստր Գէորգայ քաջի: Սոքա քաջո-

քեանք քաջութեամբ իւրեանց թափեցին ի Թուրքաց յուով բերդս և դաւառս ի սուղ ժամանակի...»:

Թեամբն իւրեանց թափեցին բազում բերդերս և դաւառս ի Թուրքաց»:

Իսկ Կ. Գանձակեցին այս առթիվ գրում է. «Յաւուրս ժամանակաց թագաւորութեանն իւրեանի Հայոց արքայի էին յԱրեւելս երկու եղբարք, որդիք Սարգսի բարեպաշտ իշխանի, որդւոյ Վահրամայ, որդւոյ Ջաքարիայ, որ հատուացեալ ի Կրթաց ի բարիւրական խելէն, անուն առաջնոյն Ջաքարէ, և երկրորդին Իւանէ, արք քաջք և ճոխք իշխանութեամբ, պատուեալք ի թագուհւոյն Վրաց, որ Թամարն կոչէր, դուստր Գէորգեայ քաջի, որդւոյ Դեմեառէի»¹

Վերոհիշյալ երեք բնագրերից մեջ բերված հատվածների համադրությունից կարելի է հաստատ պնդել, որ Անանունի վկայությունն այլ բան չէ, քան Վարդան Արեւելցու և Կիրակոս Գանձակեցու համապատասխան տեղեկությունների միակցումը:

Ստորև ցույց կտանք, որ Անանունի մոտ երբեմն Վարդանի վկայությունները համեմատված են Կ. Գանձակեցու համապատասխան տեղեկությունների հետ: Եվ իզուր են հրատարակիչները կարծում, թե Անանունի սույն վկայությունը Ջաքարյան տոհմի ծագման նոր վերսիւ է (էջ 34, ծանոթ. 31):²

Անանունի «Դապիրական խելե» արտահայտությունը Կ. Գանձակեցու «բարիւրական խելե» արտահայտության կամ հնչյունափոխված ձևն է, և

¹ «Պատմութիւն Հայոց», Թիֆլիս, 1909, էջ 154:

² Հրատարակիչները վերոհիշյալ ծանոթագրության մեջ գրում են. «Ջաքարյան տոհմի ծագման այս «վերսիւն» նոր է, և մինչև այժմ բանասիրությանը հայտնի է երկու ցուցմունք. «բարեւական խելե» (Կիրակոս) (բնագրում՝ բարիւրական—Վ. Հ.) և «բաբելական խելե» (Առաքել)»:

Ինչպես հայտնի է, Առաքելը (իմա Դավրիժեցին) Ջաքարյան տոհմի ծագման մասին ոչ մի տեղեկություն չի հաղորդել: Նա միայն մեկ անգամ հիշում է Ջաքարյան տոհմի անդամներից մեկի՝ Ջաքարիա 3-րդի (Ամիր Սպասալար Ջաքարեի թոռը, Շահնշահի որդին) անունը, վերջինիս սպանության կապակցությամբ, որը, համաձայն Դավրիժեցու, տեղի է ունեցել 1261 թվին («Պատմութիւն Առաքել վարդապետի Դավրիժեցւոյ», Վաղարշապատ, 1896, էջ 624):

Հակառակ հրատարակիչների պնդման, Ջաքարյան տոհմի ծագման մասին բավական հանգամանորեն խոսում է 17-րդ դարի մատենագիր Ջաքարիա Սարկավագը. նա գրում է. «Քանզի յառաջագոյն խոստացաք առնել զպատմութիւն Ջաքարէ զօրավարի, թէ ուստի և կամ որպես էր. զի համառօտ պատմէ Կիրակոս: Ի յերկիրն բաբելացւոց այր ոմն քրիստոնեայ՝ Ջաքարիա անուն՝ կարգեալ իշխան յազգէն Մարաց, և վշտացեալ ի նոցանէ, ոչ կարաց կեալ անդէն: Եւ գտեալ ժամանակ, առնու ամենայն ընդոծինս, ծառայս և աղախինս, ախիւ բանակի իւրոյ հատուացեալ ի բարիւրական երկրէն, անկանի առ տէրութիւնն Պարսից: Եվ անտի գայ մեղմով և մտանէ ի սահմանս Հայոց, և գնայ յերկիրն Վրաց» (Ջաքարեայ սարկավագի պատմագրութիւն), հատոր 3-րդ, Վաղարշապատ, 1870, էջ 11):

Այսպիսով, հրատարակիչները, Ջաքարեա սարկավագի տեղեկությունը սխալմամբ վերագրել են Առաքել Դավրիժեցուն: Սակայն ճիշտ են այն հայագետները, որոնք Ջաքարիա Սարկավագի վերոհիշյալ վկայությունը համարում են Կ. Գանձակեցուց փոխ առնւով, ինչպես այդ նշում է Ջաքարիա Սարկավագն իր վկայության սկզբում: Մյուս կողմից Ջ. Սարկավագի «Ի Բաբելական երկրէն» արտահայտությունն այլ բան չէ՝, եթե ոչ Կ. Գանձակեցու «Ի բարիւրական խելէն» արտահայտությունը: Այս մասին տես՝ Աս. Շահնաղարյան «Ջաքարեան (երկայնաբազուկ) տոհմի ծագումը, զաղթը գեպի Ջորագետ և նախորդները» («Շողակաթ», գիրք 1-ին, 1913, էջ 66—83):

կամ զըշագորական սովորական սխալ: Այսպիսով, հրատարակիչները այն պնդումը, թե «Զաքարյանների տոհմական ծագումը բացատրող հատվածների և Լուսավորչի տան վերաբերյալ զրույցի» մեջ ժամանակագիրը «ինքնուրույն է և օգտվել է այնպիսի աղբյուրներից, որոնք առայժմ մեղանայտ են», անհիմն է և չապացուցված: Այժմ համադրենք Վարդանի ժամանակակից աղբյուրությունները և Անանունի համապատասխան վկայությունները:

Վարդան—«Պատմութիւն տիեզերական»

Անանուն

1. էջ 181—182. «... Ի վեց հարիւր քառասուն և հինգ թուին առին զԱնբերդ, և ի վեց հարիւր քառասուն և ութ առին զԱնի, և ի վեց հարիւր յիսուն առին զԲջնի, և ի վեց հարիւր յիսուն և երկու առին զԴուին, և ի վեց հարիւր յիսուն և հինգ առին զԿարս թագաւորին, և ապա զԴետաբակս և զԶարեքն: Եւ եւ անուն նոցա ընդ ամենայն երկիր: Բայց Իւանէ խաբեալ ի Թագուհոյն Թամարայ՝ տկարացաւ ի հաւատոյն և անյաջողեալ նմա՝ ըմբռնեցաւ զերի ի Խլաթ, և եղբորըն արիական անուամբ ազատեցաւ զարձեալ տալով ի կնութիւն զգուստր իւր Կնութիւն Աշրափին՝ տեառն Խլաթայ: Իսկ Զաքարէ՝ աւագ եղբայրն, մնաց յաւագ և ի սեպհական հաւատն...»:

2. էջ 193. «Արդ ի վեց հարիւր իննըսուն և մի թուին Հայոց Բաշու նուինն փոխեաց զԻշխանութիւնն Զարմաղանին և էառ զԿարնոյ քաղաք՝ հանեալ անտի զայրն երեւիլի, մեծատուն և երկիւղած ի տեառնէ, զՈւմեկն և զազգականս նորա՝ զորդիս պարոն Յոհաննու զՍտեփաննոս և զեղբարսն իւր հինգ»:

3. էջ 194. «Որ և սոյն ՈՂԲ կրկնեցաւ ի վեց հարիւր իննսուն և ութ թուին—քանզի կարծիս առին Բաշուն և այլ աւագանին ամբարտաւանութեան և ապստամբութեան թագաւորին և իշխանացն Վրաց, և ընդ ձեռամբ ամեալ զթագաւորն

1. էջ 19. «Ի թուին Ումե առին զԱնբերդ. Ումե զԱնի: Ումե զԲջնի: Ումե զԿարս և դայլ բաղում տեղիս: Բայց Իւանէ խաբել ի Թագուհուն Թամարա եղև Վրացի, և այնյաջող եղել ըմբռնեցաւ զերի ի Խլաթ և եղբարն Զաքարէ արիական անուամբն ազատեցաւ. տուեալ զգուստր իւր ի կնութիւն Աշրափին՝ տեառն Խլաթայ: Իսկ Զաքարէ եկած հաստատուն ի հաւատն»:

2. էջ 21. «ՈՂԱ. Բաջու նուինն փոխեաց զԻշխանութիւն Զարմաղանին հրամանաւ Ղանին, և նայ էառ զԿարնոյ քաղաք, հանել անտի զայր երեւիլի և զմեծատուն զպարոն Ումեկն և զազգականսն նորա և զորդիսն զպարոն Յոհանն»:

3. էջ 21. «ՈՂԸ. Կարծիս առին Բաշուն և այլ մեծամեծքն ապստամբութեան թագաւորին Վրաց և այլ իշխանաց և ընդ ձեռամբ ամեալ զթագաւորն Իւանիթ և դայլ իշխանսն կապեցին և վճիռ մահու հատին. այլ աստուծոյ խնամօքն ապրեցան

Դաւիթ և զայլ մեծամեծսն՝ կապեցին և հատին վճիռ մահու. այլ ի խնամոց վերնոյն արձակեցան ի մահուանէ. սակայն անթիւս կոտորեցին՝ և գերեցին գեօղս և ագարակս և գործեցին խայտառականո ի կանայս ի Հայս, և աւելի յաշխարհն Վրաց»:

4. էջ 194. «Յեօթն հարիւր թուին շարժեցաւ խնդիր ի մեծ պապէն Հոռոմայ և գրեաց յաղգս ամենայն քրիստոնէից, եթէ պարտ է դամենասուրբ Հոգին խոստովանել ի Հօրէ և յՈրդւոյ ըղիսեալ: Եւ ոչ եղև հաճոյ Ասորւոց և Ծունաց և Վրաց և Հայոց, որ քննեցին զդաւանութիւն առաջնոցն սրբոց ի ձեռն աստուծամերձ վարդապետին Վանականի և գտին համախոհ երեւելի արանց փառաւորաց-Աթանասի, Դրիդորի Աստուածաբանի, Գրիգորի Նիւսացւոյ, Դրիդորի Հուսաւորչին և այլոց սրբոց»:

5. էջ 195. «Յեօթն հարիւր և մի թուին մարախ եկն ի վերին աշխարհն Հայոց և արար փնաս յոլով զաւառաց»:

ի մահւանէ: Բայց բազում կոտորւածս արարին յարուս և խայտառականս ի կանայս»:

4. էջ 21—22. «2. Շարժեցաւ խնդիր ի մեծ պապէն ի Հոռոմայ և գրէ յամենայն ազգ քրիստոնէից, եթէ պարտ է դամենայն սուրբ հոգին Աստուած խոստովանել ի Հօրէ և յորդոյ ըսեալ. և ազգն Հայոց և Վանական վարդապետն գտին զբանն համախոհ սուրբ հարցն և մերոյ սուրբ Հուսաւորչին»:

5. էջ 22. «2. Ա. Մարախ եկն ի վերին աշխարհն Հայոց և արար փնաս յոլով զաւառաց»:

Հմմտ. նաև 1225 թվի Զալալեղինի արշավանքին, Դառնիի ճակատամարտին 1243 թ. Գեսարիայի, Սերաստիայի նվաճման վերաբերող, և այլ բազմաթիվ հպտվածները:

Ավելին՝ 1258—1260 թ.թ. Հուլավուլի կողմից նախ Բաղդատի և ապա Մուաֆարգինի պաշարման և զրավման Վարդան Արեւելցու տեղեկությունները (էջ 197—198) բավական համառոտված գտնում ենք Անանունի մոտ (էջ 23), իսկ 'ր տարբերակում նույնությամբ (էջ 244 բ, 145 ա)։

Վարդանը խոսելով Մուաֆարգինի պաշարման ժամանակ տեղի ունեցած սովամահության մասին, պատմում է մի դեպք. «Եւ գրեաց (ոմն ավագ քահանա—Վ.Հ.) խոստովանութիւնս ի քարտիսի և յուսացաւ տեսանել մեզ զղիւրն և ողորմութիւն գտանել յՈղորմածէն՝ բնութեանս ստեղծողին: ... զորոյ զգիր խոստովանութեան ըստ յուսոյն իւրոյ տեսաք մեք և ակն ունիմք նմա ողորմութիւն գտանել ի ղիտողէն և ստեղծողէն բնութեանս»:

Սույն հատվածը, որտեղ Վարդանը պատմում է առաջին դեմքով 'ր

տարբերակում այն գտնում ենք բառացիորեն, միայն այստեղ առաջին դեմքի փոխարեն նյութը պատմվում է երրորդ դեմքով¹

Այսպիսով, եթե նկատի չունենանք վերոհիշյալ օրինակներում Անանունի աննշան համառոտումները, ապա կարելի է ասել, որ երկու բնագրերից մեջբերված օրինակները ամբողջապես ծածկում են իրար, իսկ երրեմն միևնույն վկայութիւնները բառացի կրկնվում (ինչպես 5-րդ օրինակը և այլն):

Սակայն կարևորն այն է, որ վերոհիշյալ օրինակները մեր կողմից հատուկ նպատակով ընտրված չեն: Այդպիսի օրինակների կարելի է հանդիպիլ երկու բնագրերի ցանկացած հատվածներում: Այսպիսով, Անանունը ինչպես և Գ տարբերակը մեզ ներկայանում են որպես Վարդան Արևելցու պատմութեան համառոտ խմբագրութիւն: Վերոհիշյալ բնագրերում Վարդանի պատմութիւնը համառոտված է, սկսած Իսլամի հիմնադիր Մուհամեդի հանդես գալուց մինչև 1267 թվի հոստանդին կաթողիկոսի մահը (88-րդ էջի 1-ին պարբերութիւնից մինչև 216-րդ էջը)²:

Վարդանի պատմութեան բիրիական, ինչպես և հայոց պատմութեան առասպելական մասը ու հին շրջանը (էջ 9—88-ը) տարբերվում են Անանունից: Անանունի հեղինակը, կոմպիլատիվ իր աշխատութեան պատմական մասը հավանաբար չծանրաբեռնելու նպատակով շեղվել է Վարդանի պատմութեան նշված հատվածներից և փորձել ինքը կազմել այն:

Չնայած հրատարակիչները, հրատարակութեան բնագրին առնթեր, միայն երեք ծանոթագրութիւնների մեջ (ծանոթ. 9, 22, 38) համապատասխան վկայութիւնների մասին խոսելիս նշում են, որ «նման է Վարդան Բարձրբերդցու նկարագրածին» (ծանոթ. 9), կամ «տես Վարդան Բարձրբերդցու» մոտ (ծանոթ. 38) և այլն, սակայն նրանք բավականացել են այդքանով միայն, փորձ չանելով համեմատել երկու բնագրերը միմյանց հետ և այնուհետև տեսնել իրականութիւնը: Ավելին՝ նրանք հրատարակութեան բնագրի տողատակ առանձին հատվածներին տալով ծանոթագրութիւններ, որտեղ նշում են, թե այդ տեղեկութիւնները պետք է համեմատել այլ հեղինակների վկայութիւնների հետ, ոչ մի տեղ չեն հիշում Վարդան Արևելցու մասին (էջ 21, ծանոթ.***): այն դեպքում, երբ այդ տեղեկութեան սկզբնաղբյուրը Վարդանն է:

Սակայն Անանունը գործը Վարդան Արևելցու պատմութեան համառոտութեամբ չի վերջացնում: Նա, ինչպես մեզ թվում է, բավական մոտիկից ծանոթ լինելով մեր մատենագիրներին, Վարդանից վերցրած մի շարք տեղեկութիւնները լրացրել է այլ հեղինակների համապատասխան

¹ Սույն հատվածը չենք գտնում Անանունի մոտ: Հավանաբար վերջինիս խմբագրողը նկատելով Վարդանի պատմութեան և Անանունի նույնութիւնը, սույն հատվածը Վարդանի պատմութիւնից մուծել է Գ տարբերակում:

² Մեր մատենագրութեան մեջ նման այլ օրինակների ևս հանդիպում ենք: Սմբատ Գունդստարի անունով մեզ հասած «Տարեգիրքը» սկզբից մինչև 92-րդ էջը (Կ. Շտհնա-դարյանի հրատարակութիւն, Փարիզ, 1859) Մ. Ուռհայեցու ժամանակագրութեան համառոտումն է, մի մասն էլ այլ աղբյուրներից վերցրած անդեհութիւններ. միայն մի փոքր մասը՝ 116 էջից մինչև 125-րդ էջի կեսը, Սմբատի ժամանակակից դեպքերն են իր կողմից արձանագրված: Իսկ «Տարեգիրքը» սկսած 1286 թվից (էջ 123) ուրիշ անձնավորութիւն է շարունակել:

տեղեկություններով և կամ որևէ տեղեկություն, եթե Վարդանը շատ համառոտ է նշել, երբեմն վերցրել է ոչ թե Վարդանի պատմությունից, այլ սկզբնաղբյուրից: Այդ տեսակետից Անանունի հեղինակը և մասնավորապես նրա խմբագրողը Վարդանի վկայությունները հաճախ լրացրել են ¹ Գ. Գանձակեցու համապատասխան տեղեկություններով, այսպես՝ Անանունը բերելով մոնղոլների կողմից Գանձակի զբաղման Վարդանի վկայության համառոտումը, այնուհետև վերջինիս կցել է Գ. Գանձակեցուց վերցրած այդ դեպքերի կանխագուշակությունը վերաբերող հատվածը:

«Գ. Գանձակեցու պատմություն

Անանուն

Հայոց»

էջ 222. «... Երևեցան յառաջագոյն նշանք աւերման նոցա երեւիլ... քանդի յանկարծ պատառեալ երկրի, և արտաքս ելեալ Գուր սեաւ, և ծառ մի սօսի, զոր Անգարին կոչէին, մեծ յոյժ՝ հուպ առ քաղաքն. տեսին զնա յանկարծակի շրջեալ իւրովին, և ի տեսիլ նորա զղրղեցաւ ամենայն քաղաքն. և դարձեալ տեսին զնա կանգնեալ՝ որպէս յառաջն: Այս եղեալ երկիցս և երկրցս, և ապա անկաւ, և ոչ կանգնեցաւ»:

Եթե Անանունի մոտ հանդիպում ենք 1261 թ. Հասան-Ջալալի և Զաքարե 3-րդի սպանությունից բաժանված համառոտ վկայություններին, ապա Գ. Գանձակեցու հանդիպում ենք նաև այդ տեղեկությունների Կ. Գանձակեցու հաղորդած մանրամասնություններին:

Վերևում հիշեցինք, որ Անանունն առանձին տեղեկություններ վերցրել է ոչ թե Վարդանից, այլ սկզբնաղբյուրներից: Այդպիսի սկզբնաղբյուրներից կարելի է հիշել ² Ուռհայեցուն: Սենեքերիմ Արծրունու և յուրայինների գաղթի Անանունի տեղեկությունները ոչ այլ ինչ են, և թե ոչ Մ. Ուռհայեցու վկայության համառոտ վերապատմում: Այդպես է նաև Հով. Կոզեռնի տեսիլքին վերաբերող տեղեկությունը, որը չենք գտնում Վարդանի պատմության մեջ:

Անանուն ժամանակագրությունը ոչ թե Վարդանի «Պատմություն տիեզերականի» ամբողջական համառոտումն է, այլ նրա այն վկայությունների, որոնք մեծ մասամբ վերաբերում են հայերին և որոնք երբեմն լրացված են Կ. Գանձակեցու, Մ. Ուռհայեցու և այլ հեղինակների (թերևս Ս. Անեցու) առանձին տեղեկություններով: Սլ սակայն, Անանունի մոտ կան առանձին վկայություններ, որոնք չենք գտնում Վարդանի պատմության մեջ, ասենք՝ 1236 թ., 1254 թ. Երզնկայում տեղի ունեցած երկրաշարժների մասին և այլն: Թե ինչու Անանունը այդպես է վարվել և կազմել մի կոմպիլատիվ աշխատություն, զժխար է որոշակի բան ասել, սակայն փաստ է այն, որ Անանունի աղբյուրները, որոնք հրատարակվել են թվում էին «առաջիկա անհայտ», հիմնականում մեղ հայտնի են:

¹ (Հմմ. Մատթէոս Ուռհայեցի, Ժամանակագրություն, Վաղարշապատ, 1898, էջ 46—49):

Ե՛րբ կարող էր կազմվել Անանուն ժամանակագրութիւնը, Հրաաւարակիչներն այն կարծիքին են, որ Անանունը վերջից թերի չէ (էջ 6) և որովհետև Նրա բնագրի վերջին սահմանը ներկա վիճակով 1300 թվից այս կողմը չի անցնում, հետևապես նրանք կարծում են, որ «ժամանակագրութիւնս հեղինակը պետք է իր երկն ավարտած լինի 14-րդ դարի «կղերն» (էջ 6)։

Սակայն հրատարակիչներն իրենց վերոհիշյալ ասածին հակասելով, հրատարակութիւնն ընդգրկելով 1300 թ. վերաբերող հատվածը վերջացնում են ընդհանուրապես (էջ 29)։ Այդ նշանակում է, որ ընդգրկելով թերի է՛, Ե՛վ իրոք, Անանուն ժամանակագրութիւնն ավարտում է, որը պահպանվել է միայն № 3425 ձեռագրի տարբերակում, վերջից թերի է՛ և հետևապես, հատուկ կարևոր է եղբայրացնել, որ ժամանակագրութիւնն սկզբնական ընդգրկելով սահմանը անշուշտ անցել է 1300 թվից այս կողմ։ Դժբախտաբար, հնարավորութիւն չունենք այդ սահմանը որոշակիորեն նշելու։ Սակայն, ինչպես հայտնի է, Անանուն ժամանակագրութիւնը լինելով Վարդան Արևելցու «Պատմութիւն տիեզերականի համառոտումը», այնուամենայնիվ նրա հեղինակը 1268 թվից սկսած (հրատարակութիւնն 24-րդ էջի 5-րդ տող, վերևից) մինչև վերջ՝ 1300 թվը (որան պիտի ավելացնել նաև ընդգրկելու մասը) շարունակել է Վարդան Արևելցու պատմութիւնը։ Արդ՝ նկատի ունենալով վերոհիշյալ հանգամանքը, կարելի է ենթադրել, որ Վարդանի պատմութիւնն շարունակութիւնը Անանունի ժամանակակից դեպքերն են։ Եթե ճիշտ է այս, նշանակում է Անանուն ժամանակագրութիւնը կազմվել է 14-րդ դարի 1-ին քառորդում, եթե ոչ ավելի ուշ։

Անանունի Գ տարբերակի խորագիրը, որն ի դեպ տարբերվում է Անանունի հրատարակութիւնն խորագրից, այսպիսին է՝ «Այս վայր վառն թըւոց Աղամայ մինչև ի Գրիստոս, մինչ ի Գրիգոր Լուսաւորիչն, մինչ ի գրոյն ելանելն, մինչ ի Հայոց թուականն, մինչ ի մեզ գտնեալն պատմեալն»։ Ընդգծված հատվածը մեզ ենթադրել է տալիս, որ Անանունի սկզբնական ընդգրկելով խմբագրվելուց բացի, այն շարունակվել է։ Իսկ թե երբ է կատարվել այդ, ուղղակի ցուցում չունենք։ Սակայն Գ տարբերակի նշանավոր դեպքերի թվարկման հատվածում ի միջի այլոց կարդում ենք. «Ի Հայոց թուականէն մինչև ի Գրիգոր Նարեկացին, մինչև ի Ներսէս Կայեցի ճԶԳ (=183) ամ է։ Անդի մինչև Գրիգոր և ի Ծերէնց Գրիգորն ԳՃԼ (=330) ամ է։ Սոքայ եղևն ի թվին Հայոց ԸԾԾԵ (=855) ամին»... (էջ 229բ—230ա)։

Եթե մի կողմ թողնենք հայկական թվականից մինչև Ներսէս Շնորհալու և սրանցից էլ մինչև Գրիգոր Ծերէնցի տարիների հաշիվը, որն անշուշտ սխալ է, և ուշադրութիւն դարձնենք Գրիգոր (Իմա Տաթևացի)¹ և Գրիգոր Ծերէնց անուններին, այնուհետև դժվար չի լինի եղբայրացնել, որ Անանունի Գ տարբերակը հանդես կարող էր գալ ոչ շուտ, քան վերոհիշյալ հեղինակները, այսինքն 15-րդ դարի սկզբներին։ Իսկ եթե ուշադրութիւն

¹ Հմմտ. Առաքել վարդապետի գրած Գրիգոր Ծերենցի նահատակութիւնն պատմութիւնն հետևյալ հատվածի հետ. «Ուսումնակից իւր (Գ. Ծերենցը Վ. Հ.) ունելով զհոմանունն Գրիգոր գերկրորդ Լուսավորիչն Հայոց, սուրբ Առաքելոյն Ստաթէիւ» («Նոտարք Հայոց», Գ. Պոլիս, էջ 78)։ Այս շրջանում, բացի Գր. Տաթևացուց, չկա մեկ ուրիշ Գրիգոր, որն իր գիտական պատրաստվածութիւնը այնքան բարձր կանգնած լիներ, որ գնեինք Գրիգոր Տաթևացու փոխարեն, Գրիգոր Ծերենցի կողքին։

դարձնենք վերոբերյալ վկայության ռուբայ (Գրիգոր Ծերենցը և ընկ. Վ. Հ.) եղեն ի թվին ԸՃԾԵ (=855) ամին» հատվածի վրա, կարծում ենք սխալված չենք լինի, եթե 1406 թվականը (855+551) համարենք Անանունի ժամանակագրության խմբագրության (Ի տարբերակի) ստույգ տարեթիվ: Մի ժամանակաշրջան, երբ վերոհիշյալ մատենագիրները տակավին կենդանի և ճանաչված հեղինակություններ էին միջնադարյան հայ մատենագիրների լայն շրջաններում:

Այսպիսով, վերևում ամբողջ շարադրվածից, գալիս ենք հետևյալ եզրակացություններին:

1. Անանուն ժամանակագրությունը Վարդան Արևելցու «Պատմութիւն տիեզերականի» համառոտումն է, լրացված Կ. Դանձակեցու, Մ. Ուռհայեցու և այլ հեղինակների առանձին վկայություններով:

2. Անանուն ժամանակագրության ներկա բնագիրը թերի է և նրա վերջին սահմանն անցնում է 1300 թվից այս կողմը: Հետևապես այն կազմավել է ամենայն հավանականությամբ 14-րդ դարի 1-ին քառորդում, եթե ոչ ավելի ուշ:

3. Անանուն ժամանակագրությունը խմբագրվել է ամենայն հավանականությամբ 1406 թվին և, ինչպես երևում է վերջինիս խորագրից, այն շարունակվել է մինչև 15-րդ դարի սկիզբը: Սակայն մեզ անհայտ պատճառներով այն Վարդան Արևելցու պատմության վերջին եզրից այս կողմը չի անցնում: